ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՑԻ ԳԱՐՈՒՆԸ.

Բացուեց գարունը, երկիր կանաչեց.
Համայն բնութիւն շքեղ զարդարուեց.
Մեր երկիրը հիւր կռունկն եկաւ,
Իւր կռկռոցով աշխարհը լցրեց.
Իսկ ես աստ օտար
Հեծեմ վշտահար.

Ամբողջ ցորեկը բեռը շալակիս
Շուկայից շուկայ ես պտտումեմ.
Դիշերն անհանգիստ՝ գլուխս չոր գետնին՝
Դառն երազներում տանջվում մաշվումեմ.
Այստեղ կարեկից
Չունիմ վշտակից.

Հեռու իմ ծնողք, կին ու զաւակներ
Ճամբաս կպահեն երկար տարիներ.
Մի քանի շահի որ վաստակելով
Գնամ սփոփել նոցա դառն օրեր,
Որոնք զօրն ի բուն
Ինձ են սպասում.

Անցան ամիսներ, հիւանդ ընկած եմ,
Ընտանեացս տեսոյն կարօտ կհեծեմ.
Ես աստ կենսամաշ, անդ նոքա անտէր.
Ո՞վ կխնամէ այն անմեղ գառներ.
Ա՜խ այս գարունն ինձ
Դառն է անցեալից.

Թէ ինձ կլսէք, ո՛վ հայ եղբայրներ,
Երբէք չէք բաժանուիլ ձեր հայրենիքէն.
Հայրենիքի մէջ վաստակած չոր հաց
Հատ ու շատ քաղցր է քան թէ օտարաց
Երկրում ձեռք բերած
Բաղդն ու անբաւ գանձ.

ՍԷԹ.

ՆԱՄԱԿ ԱԳ-ԲԻՐՄԱՆԻՑ

«Ինչպէս անցեալ տարի Ագբիրմանիս Հայ հասարակութիւնը ի ներկայութեան վիճակիս Դեր. Առաջնորդ Հօր փութաց իր երկսեռ ծխական դպրոցի հոգաբարձու Պ. Ծերօն Աստուածատրեանի 30 ամեայ՝ անընդհատ սոյն պաշտօնավարութեան համար իր շնորհակալեաց քուէն տալ,

նոյնպէս և այս տարի խնդրագիր հանրագրով մ'դիմեց Նորին Բարձր Սրբազնութեան որ իր մեծ միջնորդութիւն ի գործ դնելով, առ որ էն, որպէս զի յարքունուստ ևս պատուանշան մը շնորհուի Պ. Ծերօն Աստուածատրեանի ի վարձատրութիւն իւր լիուլի արդեանց և ազգօգուտ ծառայութեանցն։

Այն նուէրներու մասին կ'ըսեմ, որք ցայսօր լի են եկեղեցւոյ գանձատան մէջը իբր յիշատակ։ Եւ այն ծառայութեանց համար կ'ըսեմ՝ որ մատոյց և որ դեռ կը մատուցանէ իր հոգաբարձութեան ընթացքի մէջը։ Ինչպէս դպրոցին կտակուած այն փոքրիկ գումարը, գրամագլուխը, որ հազիւ 1,500 բուրլոյ կը յանգէր իսկզբան, այլեւայլ շահաբեր միջոցներով հիմայ այնպիսի մի կիրառութեան մէջ է մտած, որ և տարուէ տարի 600—700 բուրլի շահ կը գոյանայ. և անով է՝ որ ահա դպրոցնիս երկար տարիներէ ի վեր անսայթաք կը տոկայ իր ծախուց առջև, և այլն։

Արդ, ամփոփելով խօսքս այս մասին, կ'ուզամ նախ խորին շնորհակալութիւնս յայտնել տեղւոյս ազնիւ հայրենակից համազգեացս, որք գնահատել կամեցան իրենց դպրոցին ընդ միշտ ծառայող անձին գործքն։ Եւ երկրորդ որդիական պարտաւորութեամբ՝ յանուն Ագթիրմանիս Հայոց՝ խորին և երախտապարտ զգայուններս յայտնել Գեր. Տ. Մակարայ Ս. Թեմական Առաջնորդի մերոյ, որ հաճեցաւ Նորին Սրբազնութիւն ևս իր Հայրական և խորին ուշադրութեամբ ընդունել առ ժամայն իւր որդւոց խնդիրն, և խոստացաւ իր միջնորդութիւնն ի գործ դնել առ այս։

Հաճեցէք . . . . . ի խրախոյս այլուր անձնուէր ծառայողացն Ազգիս, սոյն երկտողս հիւրընկալել Ձեր պատուական Արարատ հանդիսին մի անկիւնը։ . . . . . .

ՄԵԼՔՈՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՏՐԵԱՆՑ։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Ի 12 Ապրիլի 1882 ամի. Յովհաննէս քահանայն Թէմուրազեանց Տփխիսեցի յօրէ ծնունդութեան իւրոյ ցայսօր ի պատճառս անվայել կոչման իւրում ընթացից եւ ըմբոստ բնաւորութեան եւ վարմանց իւրոց քանիցս ենթարկեալ է ընդ պատժոց, որովք տակաւին ոչ զգաստացեալ ի նոյնօրինակ դնացիցն՝ լինի օրինակ եւ տոյժ դայթակղութեան եւ այլոց քահանայից։

— Առ առաջնորդութեամբ Մակարայ Արքեպիսկոպոսի՝ Առաջնորդի վիճակին Վրաստանի նա — Յովհաննէս քահանայն Թէմուրազեանց վասն զոհոց, անհաճեստ, կռուասէր եւ յափշտակող բնաւորութեան իւրոյ, հրամանաւ Ս. Սինոդի արգելեալ է ի քահանայագործութենէ եւ անկեալ ընդ ապաշխարանօք. բայց նորա ոչ անսացեալ տնօրէնութեան Ս. Սինոդի չէ կատարեալ զապաշխարանս իւր։